

Հարց 1

Հայաստանի Հանրապետության նախարարությունը՝

- գործադիր իշխանության հանրապետական մարմին է:

(կետ 1)

Հարց 2

Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան բնագավառի քաղաքականությունը՝

- մշակում և իրականացնում է համապատասխան ՀՀ նախարարությունը:

(կետ 1)

Հարց 3

Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում է և նրա գործունեությունը դադարեցվում է՝

- ՀՀ Նախագահի հրամանագրով:

(կետ 2)

Հարց 4

Նախարարությունն ունի՝

- ՀՀ զինանշանի պատկերով և նախարարության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

(կետ 5)

Հարց 5

Նախարարության համակարգում ընդգրկվում են՝

- նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունները և հիմնարկները:

(կետ 6)

Հարց 6

Նախարարությունը կառավարում է՝

- նախարարը:

(կետ 9)

Հարց 7

Նախարարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է՝

- ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:

(կետ 9)

Հարց 8

Նախարարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է՝

- ՀՀ վարչապետը՝ խորհրդակցելով նախարարի հետ:

(կետ 9)

Հարց 9

Նախարարը հաշվետու է՝

- ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին:

(կետ 11)

Հարց 10

Նախարարը իր լիազորությունների սահմաններում ղեկավարում է՝

- նախարարության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

(կետ 12<բ>)

Հարց 11

Նախարարի խորհրդականներին, մամուլի քարտուղարին ու օգնականներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է՝

- նախարարը:

Հարց 12

Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները սահմանում է՝

- նախարարը՝ օրենքին և նախարարության կանոնադրությանը համապատասխան:

(կետ 12<է>)

Հարց 13

Նախարարը սահմանում է՝

- աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև:

(կետ 12<ը>)

Հարց 14

Նախարարը լսում և նախարարության աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը հաստատման է ներկայացնում՝

- ՀՀ կառավարություն:

(կետ 12<ժ>)

Հարց 15

Նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատում է՝

- ՀՀ կառավարությունը՝ նախարարի ներկայացմամբ:

(կետ 12 <ժբ>)

Հարց 16

Նախարարության աշխատողների թիվը հաստատում է՝

- ՀՀ վարչապետը՝ նախարարի ներկայացմամբ:

Հարց 17

Նախարարի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է՝

- նախարարի տեղակալներից մեկը՝ նախարարի հանձնարարությամբ:

(կետ 13)

Հարց 18

Նախարարի տեղակալը իր լիազորությունների սահմաններում՝

- համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ:

(կետ14 <զ>)

Հարց 19

Նախարարի տեղակալը իրեն հանձնարարված բնագավառներում՝

- համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները:

(կետ 14<է>)

Հարց 20

Նախարարության աշխատակազմը՝

- իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է:

(կետ17)

Հարց 21

Նախարարության աշխատակազմը գործում է՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, <Պետական կառավարչական հիմնարկների մասին> ՀՀ օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, ՀՀ միջազգային պայ-

մանագրերի և նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա:

(կետ18)

Հարց 22

Նախարարության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են՝

- նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ բաժիններ, քարտուղարություն) և առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ, տեսչություններ):

(կետ 30)

Հարց 23

Նախարարության աշխատակազմի կառավարումն իրականացնում է (են)՝

- ՀՀ կառավարությունը և նախարարը օրենքով և նախարարության կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

(կետ 37)

Հարց 24

Նախարարության աշխատակազմը ղեկավարում է՝

- նախարարության աշխատակազմի ղեկավարը:

(կետ 37)

Հարց 25

Նախարարության աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են՝

- օրենքով:

(կետ 48)

Հարց 26

Նախարարության լիազորությունները սահմանվում են՝

- օրենքներով և ՀՀ Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, ՀՀ կառավարության որոշումներով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով:

(կետ 3)

Հարց 27

Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է՝

- ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

(կետ 4)

Հարց 28

Նախարարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է՝

- ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, նախարարության կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

(կետ 9)

Հարց 29

Նախարարն իրականացնում է՝

- նախարարությանը վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրոջ իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

(կետ 10)

Հարց 30

Նախարարը իր իրավասության սահմաններում՝

- ընդունում, և օրենքով սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական իրավական ակտերը:

(կետ 12<ա>)

Ֆաթեց 31

Նախարարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով և նախարարության կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառներին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան առաջարկություններ է ներկայացնում՝

- ՀՀ կառավարություն:

(կետ 12<գ>)

Ֆաթեց 32

Նարարարը իր իրավասության սահմաններում՝

- արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

(կետ 12<դ>)

Ֆաթեց 33

Նախարարը՝ աշխատակազմի ղեկավարի, ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հանձնարարագրերը, հրահանգները կարգադրությունները և ցուցումները կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում՝

- օրենքով նախատեսված իր լիազորության սահմաններում:

(կետ 12<թ>)

Ֆաթեց 34

Նախարարության համակարգի աշխատանքները՝ նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է՝ (են)

- նախարարի տեղակալը:

(կետ 14 <ա>)

Հարց 35

Նախարարության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը՝

- համակարգում է նախարարի տեղակալը՝ իրեն հաճնարարված բնագավառներում:

(կետ14 <ե>)

Հարց 36

Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը՝ (այդ թվում՝ նրա կազմում գործող գործակալությունների և տեսչությունների)՝

- օրենքներով, այլ իրավական ակտերով և նախարարության աշխատակազմի կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:

(կետ16)

Հարց 37

Նախարարության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց՝

- կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

(կետ 22)

Հարց 38

Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է՝

- գանձապետական համակարգի միջոցով:

Հարց 39

Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է՝

- համապատասխան նախարարը:

(կետ 31)

Հարց 40

Նախարարության աշխատակազմի գործունեությունը վերակազմակերպում և դադարեցնում է՝

- ՀՀ կառավարությունը:

(կետ 38 <ա>)

Հարց 41

Նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները հաստատում է՝

- ՀՀ կառավարությունը:

(կետ 38 <բ>)

Հարց 42

Նախարարության աշխատակազմի կառուցվածքը հաստատում է՝

- ՀՀ կառավարությունը:

(կետ 38<դ>)

(2002 թվականի ապրիլի 18-ի ՀՀ կառավարության N 16 արձանագրային որոշումից)